Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3363

2166

4691

ՃԱՌ

ԱՍՍՆ ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹՈՒ

Ի վերայ մահուան և չարչարանաց Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Հրատարեալ ի կողմանաց Մարդասիրական Ճեմարանիս

Ի ԿԱԼԿԱԹԱ

2000 Օրինակք։ Ի Աէպտեմբերի, 1828։

3363

AN

HOMILY

FOR

GOOD-FRIDAY,

CONCERNING THE

DEATH AND PASSION OF OUR SAVIOUR

JESUS CHRIST.

Printed by the Order and at the Expense of the Calcutta Corresponding Committee of the Prayer-Book and Homily Society.

CALCUTTA:

AT THE PRESS OF THE ARMENIAN PHILANTHROPIC ACADEMY.

2000 *Copies.* *September,* 1828.

ՃԱՌ

Վասն ուսոյ ուրբաթու, ի վերոյ մատուցեալ զ՝ երեքշաբթոյ գրչէն մերոյ Ցե՛ր Քո՛ի։

Սիրելեա՛լ եղբարք իմ՝ ի Քրիստոս, չէ՞ արժան մեզ՝ զոր փրկեալ Քրիստոս՝ ի սատանայէ և՝ ի մեղայ և՝ ի մահուանէ և՝ ի յաւիտենական դատապարտութենէ՝ Թողուլ զայս ժամանակ անցանել՝ ի բաց առանց խորհելոյ խոկալոյ զայնմիկ հոգեկերոյոյ փրկագործութենէ՝ զոր փրկիչն մեր Ցե՛ր Քրիստոս իբրև զայսու ժամանակաւ իւրով անհուն գթութեամբ և ողորմածութեամբն կատարեաց վասն մեր մեղաւորացս և նորին իսկ մահաբեր թշնամեայ։ Քանզի եթէ առն մահկանացուի բարի գործ ինչ գործեալ իցէ յօգուտ հասարակութեան, և յաղագս իւրոյ բարեգործութեան արժանացեալ իցէ գոհութեան և երախտագիտութեան հասարակայ, ապա ուրեմն որքան ևս առաւել պարտ և պատշա՛ճ է մեզ ամենեցուն յիշել երախտագիտութիւն զայս պատուական գործ արքունեան մահուանն Քրիստի։ որով իբր գնոյ գնեաց մեզ զանտարակոյս քաւութիւն և թողութիւն մեղայ մերոյ։ որով այնպէս զերկնաւոր Հայրն մեզ Հայրագրեաց, մինչ համարիլ նորա զմեզ իբրև իւր սիրելեալ որդիք և Ճշմարիտ ժառանգակիցք արքայութեան երկնից ընդ միածին որդւոյ իւրոյ Քրիստի։ Եւ արդարև այնքան մեծ եղև սէր և շնորհքն Քրիստի առ մեզ՝ մինչ ինքնակամ՝ յանձն էառ մերկանալ յիւրոյ հիւսքանչ և

յանդուգնական փառայ, զոր վայելէր հաւասար
ընդ Հօր յերկինս. և գալ ի Ջանել յայս հովիտ
թշուառութեան, լինել մեզ նման մարդ մահկանա-
յու և զանարգ ծառայի զգենուլ զկերպարան.
կամելով զմեզ փրկագործել և զհոգիս մեր երկ-
նային փարթամութեամբ Հոխայուսանել. զմեզ
ասեմ զմեղաւորս՝ որք անհաշտ թշնամի էաք նմա
և թողեալ էաք զսուրբ օրէնս և զպատուիրանս
նորա և հետևեալ էաք առփանայ և մեղա-
գրգիռ հեշտութեանց ապականեալ բնութեամբ մերոյ։
Կող. Է. Բայց՝ ի վերայ այսր ամենայնի անտես արարեալ
զքո զմեղս մեր՝ զանձն իւր մատոյց իբրև միջնորդ
հաշտարար՝ ի մէջ արժանահաս բարկութեան Աստ
և քայլախուտ մեղայ մերոյ. և պատառեայ՝ ի
ծուէնս զայն մուրհակ պարտուց՝ որով մեք
յԱստ ծառայութիւն անկաք. և հատուցեալ
գպարտս մեր՝ զմուրհակ գերութեան թափեայ։
Պարտք մեր այնքան ծանրացեալ էր՝ ի վերայ
ուսոց մերոց՝ մինչ զի նահնար էր մեզ՝ ի ծան-
րութիւն անտի թեթևանալ։ Եւ առանց հատու-
ցանելոյ զպարտս մեր՝ անկարելի էր մեզ ազա-
տանալ՝ ի ծանրաբեռնութենէ այսր պարտուց
մերոյ անձնաւոր զօրութեամբ։ Ամին իրի և մեր
նեղութեան զքո անչափ գթութեան շարժեաց. որով
Տէրն զծառայն՝ ի կապից պարտուցն ազատեաց։

Ապա ուրեմն ո՞վ ոք այժմ խորհեսցի
զանտանելի պարտուց մեղայ՝ զոր ոչինչ կարէր
հատուցանել բայց միայն մահն Անմեղին՝ և ո՛չ
՝ի խորս սրտի իւրոյ զգործս մեղայ ատեսցէ։
Եթէ այնքան ատելի իցէ մեղքն Աստ՝ մինչ ո՛չ
զմարդ և ո՛չ զհրեշտակ բաւական համարեցաւ
Աստ փրկագործութեան գերեվար բնութեան մերոյ.
բայց միայն զմահ միայնակ և սիրեցեալ որդւոյ
՝իւրոյ. ապա ուրեմն ո՞վ ոք՝ ի կապանայ մեղայն
ո՛չ զանդիտեալ դողայցէ. Եթէ մեք՝ բարեկամք

խմ՝ խորհիցիմք անգամ՝ ի մահ, զի վասն մեղայ մերոյ այս անմեղ գառն՝ ի մահ վարեցաւ, առաւել ևս զմեզ լալոյ և ողբալոյ արժանի համարեսցուք՝ որք զմահ պատճառեցաք նմա, քան թէ աղաղակս բարձցուք վասն նախանձու և անգթութեան Հրէիցն որք զնա՝ ի մահ մատնեցին։ Մեք զգործս ապիրատս գործեցաք, որոյ վասն փրկիչն մեր շարչարեալ վիրաւորեցաւ. իսկ Հրէայքն եղէն միայն պաշտօնեայք մերոյ ապիրատուն։ Ապա ուրեմն արժան է մեզ մտօք իջանել՝ ի խորս սրտիկ մերոյ. և լուսեալն ողբալ զթշուառութիւն և զմեղսամած վարս կենաց մերոյ։ Հաւաստեաւ՝ ի միտս մեր գիտասցուք, զի եթէ ամենապատուական և սիրելի Որդին Աստուծոյ այսպէս պատժապարտ գտաւ և հարուածս յանձն իւր ընկալաւ վասն մեղայն՝ զոր իւր ոչ էր բնաւ գործեալ, ապա ուրեմն մեք որքան առաւել արժանի եմք պատժապարտուն և չարչարանաց վասն բազմապատիկ և օրական մեղայն՝ զոր անընդհատ ընդդէմ կամայն Աստուծոյ գործեմք յաւարժամ, եթէ ոչ՝ ի սրտէ՝ ի վերայ յանցանաց մերոց զղջանայցեմք և յաւ յաւիտիսմք վասն մերոց անօրէնութեանց։ Զէ՞ կարելի ուրեք զմեզս սիրել զոր այրքան ատեայ Աստ՝ և առաջի Աստուծոյ հնարս գտանել։ Ո՞չ ոք կարէ ասել թէ ի սրտէ սիրէ զՔրիստոս, և սրտիւ բարեկամ և ընտանի լինիցի մեծի թշնամոյ նորին. այսինքն մեղայ՝ որ եղև պատճառ մահուան նորին։ Այնքան սիրեմք մեք զՅիսուս Քրիստոս՝ որքան ատեմք զմեղս։ Սակայն իրի պարտ է մեզ կարի զգուշանալ, զի մի նուիրեսցուք զսիրտս մեր մեղայ, և նոքիմք թշնամիք Աստուծոյ և մատնիչք Քրիստոսի լինիցիմք։ Քանզի ոչ միայն որք զՔրիստոս՝ ի խաչ բեւեռեցին՝ են նորա չարչարողք և խաչահանողք, այլ և ըստ ոգւոյն Պաւղոսի՝ այնքիկ ամենայն վերստին՝ ի Եբր. ՃԺ։

խաչ հանեն անձանց զՈՐԴԻՆ ԱՅ և դարձեալ
խայտառակեն, որք զմեղս և զանօրէնութիւն
գործեն. յորոց Քո՛ ի մահ մատնեցար չարա-
Հռովմ. ը։ չար։ Զի եթէ թոշակն մեղայ մահ է և մահ
յաւիտենական, ուրեմն արդարև վտանգ մեծ
է մեզ ծառայել մեղայ։

Հռովմ. թ։ Եթէ կեցցեմք ըստ մարմնոյ և ըստ մեղ-
սամած ցանկութեց նորա, մեռանելոյ եմք հա-
ւաստեաւ, ոչ ամենակալն Աստուծոյ մեզ ի
ձեռն սքոյն Պաւղոսի։ Զի հնար մեզ երբեք
կենդանի լինել ԱՅ, բայց միայն մեռեալ լինե-
լով մեղայ։ Եթէ Քո՛ ի մեզ է, ապա մարմին
մեռեալ է վասն մեղայ. և հոգին կենդանի է
վասն արդարութե։ Եթէ հոգի այնորիկ՝ որ
յարոյցն զՅի՛ ի մեռելոց, բնակեալ է ի մեզ,
ապա և որ յարոյց զՅի՛ Քո՛ ի մեռելոց՝ կեն-
դանացուցցէ զմահկանացու մարմինս մեր բնա-
Հռովմ. ժ։ կեալ հոգւովն իւրով ի մեզ։ Բայց եթէ մահն
ի մեզ իշխէ և թագաւորէ, յայնժամ Աստ-
ղբիւրն ամ՛ շնորհայ և առաքինութեց հե-
ռացի ի մէնջ. յայնժամ սատանայն և չար ոգի
նորա ի մեզ իշխէ և թագաւորէ։ Եւ արդարև
եթէ յայսպիսի թշուառ վիճակի մեռանիցիմք,
ոչ զկեանս անմահութե ժառանգեսցուք, այլ
անկցուք ի մահ և ի դատապարտութի անեզր
Քո՛ ոչ էրէնաց և անվախճան։ Քանզի ոչ փրկեաց զմեզ Քո՛
զմեզ ի մեղաց, ի մեղայ, զի մեք վերստին ի նոյն մեղս դարձ-
զի հեցցուք ի յուք անվտանգ, այլ փրկեաց զմեզ զի մեք ըզ-
մեզ հրէնն։ խլրտիւն մեղայն ի բոյն թոշուցումք, և կեցցուք
ի կեանս արդարութե և ամբծութե։

Արդարև կամեցար Աստ սրբել զմեզ ի
մկրտութեան մերում յաղտեղութենէ մեղայ,
զի զկնի այնորիկ կեցցուք ի կեանս մաքուրս և
անարատս։ Ի մկրտութե անդ խոստացաք ա-
ռաջի ԱՅ հրաժարիլ ի սատանայէ և յամ

խորհրդոյ նորա. խոստացաք լինել հնազանդ
որդիք միշտ հետևելով կամայն և պատուիրա-
նայն Աստուծոյ։ Ապա ուրեմն եթէ իսկապէս հայր
մեր է Աստուծ, տայցուք նմա զպատշաճաւորս իւր
պատիւս։ Եթէ որդիք Աստուծոյ իցեմք մեք, ուրեմն
յուսցուք նմա զմեր որդիական հնազանդութիւն,
ոչ՝ քո յայտնապէս խոստովանելով եղոյց զհնա-
զանդութիւն իւր առ Հայր. քանզի ըստ վկայելոյ
սրբոյն Պաւղոսի, խոնարհեցոյց զանձն, լեալ Փիլիպ. Բ։
հնազանդ մահու չափ՝ և մահու խաչի։ Եւ զայս
ամենայն արար նա վասն մեր հաւատացելոցս։ Ո՛չ
պատժեցաւ նա վասն իւր ինքեան, զի էր նա բո-
լորովին անմեղ՝ ի վարս և անարատ՝ ի գնայս։
Բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, ասէ Եսայի. Ե։
Եսայի, և պատժեցաւ վասն մերոց անօրէ-
նութեանց. նա զտուգանս մեղաց մերոց կրեաց
առ՝ ի փրկել զմեզ՝ ի վտանգէ մահուան. նա
զհիւանդութիւնս մեր վերացոյց և զցաւս մեր
եբարձ ըստ Եսայեայ։ Ո՛չ հրաժարեցաւ նա
յամ ցաւոց և չարչարանաց, զի փրկեսցէ զմեզ
՝ի յաւիտենական տանջանաց։ Հաճեցաւ նա այս-
պէս վասն մեր չարչարիլ. բայց մեք չէաք արժանի
նորին իսկ չարչարանաց։ Սմին իրի որքան ա-
ռաւել շնորհապարտ տեսանեմք զմեզ նմին,
այնքան առաւել պարտիմք շնորհակալ լինել
նմա. և արդարև պարտիմք առաւել ևս յուսալ
գտանել զայլ բաղում բարերարութիւս՝ ի ձեռաց
նորա, ոչ՝ արժանապէս գտանել զշնորհս և
զպարգևս միայնակ որդւոյ նորա ամենատաւ
բարերարութեան նորին։ Վասն զի եթէ Աստուծ Հռովմ. Ը։
ըստ առաքելոյն Պաւղոսի, յիւր որդին ոչ
խնայեաց՝ այլ վասն մեր ամենեցուն մատնեաց
զնա. զի՞արդ ոչ նոքաւ հանդերձ զամենայն շնորհեսցէ
մեզ։ Զոր ինչ միանգամ պիտոյս ունիցիմք վասն
հոգւոյ և մարմնոյ մերոյ, կարեմք մեք պատ-

շաՀապէս և Համարձակութիւն մատչիլ առ
Հայրն մեր գթած, և խնդրել ՝ի նմանէ զպի-
տոյս մեր • զոր նա պարգևեսցէ իբրև կարօտա-
ւոր որդւոյ։ Քանզի տուաւ մեզ իշխանութիւն
Յովհ. ա։ որդիս Աստուծոյ լինել, որք հաւատամք յանուն Յսի։
Մատ. ժա։ Զոր ինչ խնդրիցեմք յանուն նորա ՝ի հօրէն
Աստուծոյ, տացէ մեզ։ Քանզի ամենակալն Աստուած այն-
քան հաՀեցեալ է ընդ որդին իւր Քրիստոս, զի վա-
սիրոյ նորա զմեզ արժանացոյց իւրոյ շնորհաց և
ոչ Հանցէ զմեզ յիւրոյ երեսաց։ Այնքան հա-
Հելի և ընդունելի եղև նմա պատարագ մահուան
որդւոյ նորա՝ զոր նոյն ինքն որդին այսպէս խո-
նարհաբար և անմեղութեամբ կրեաց՝ մինչ զի արժան
է մեզ համարիլ զայն միայնակ և լիակատար
քաւութիւն մեղաց աշխարհի։ Նա աւանիկ՝
զայնպիսի շնորհս ստացաւ որդին մահուամբ
իւրով վասն մեր յերկնաւոր հօրէ իւրմէ, մինչ
զի արդեամբք մահուան նորա (եթէ արդարև
իսկեմք Հաշմարիտ քրիստոնեայ, և ոչ անուամբ
միայն) կրկին այժմ շնորհս գտաք որդեգրութեան
առաջի Աստուծոյ, գոլով միանգամայն ազատեալ ՝ի
ծանրութենէ մեղաց մերոյ։ Արդարև ոչինչ
լեզու սահմանել կարէ զարդիւնաւորութիւն
այսպիսի պատուական մահուան։ Վասն զի ՝ի
սմա բնակի հանապազորդ թողութիւն օրական
մեղաց մերոյ • ՝ի սմա հանգչի յոյս արդարութեան
մերոյ • յայսմանէ ընդունիմք և սոսկաւ իբր գնոյ
գնեմք զմշտնջենաւոր ողջութիւն հոգւոյ մերոյ։
Գործք • ճ։ Եւ չիք այլով իւիք փրկութիւն, զի և ոչ անուն
այլ գոյ ՝ի նեղքոյ երկնից տուեալ ՝ի մարդիկ՝
որով արժան իսկ կեալ մեզ՝ այլ այս միայնակ
գործ պատուական պատարագի մարմնոյն Քրիս-
տոսի ՝ի վերայ սեղանոյ խաչին։ Եւ արդարև ոչինչ
գործ մահկանացու մարդոյ սրբակեցի կարէ
արդեամբք հաւասարիլ ամենասուրբ գործոյն

Քեզ։ Քանզի անտարակոյս անօգուտ լինէին
ամ խորհուրդք մեր և գործք, եթէ անմանն լի-
նէին յարդեանց մահուանն Քո։ Արդարութիւնս
ամ կարի անկատար է առ բաղդատութիւն արդա-
րութեանն Քոյ։ քանզի յայտարս և՝ ի գործս նորա
չկայր ինչ արատ մեղայ կամ նշան ինչ անկատա-
րութեան։ Եւ յաղագս այսորիկ գործքն Քոյ եղեն Գործք մեր լի՛ են
Հշմարիտ ուղղութիւն մերոյ արդարութեան, յորժամ անկատարութեան։
գործք և արարք մեր լի՛ էին թերութիւնք և տկա-
րութիւնք և անարժանք էին մեծի շնորհայ ամենա-
կալին Այ, և առաւել փառայն այնմիկ՝ որ
պատշա՛ճ է միայն արդեանց և գործոցն Քոյ։
քանզի ըստ Դաւթի մարգարէին, մի՛ մեզ տէր՝ Սաղմ. ճգ։
մի՛ մեզ՝ այլ անուան քում տուր զփառս։ Ապա
ուրեմն սիրելի՛ բարեկամք՝ եկայք՝ ի միտսն ամ
ակնածութիւն փառաւորեսցո՛ւք զանուն նորա։
բարեբանեսցո՛ւք և գովեսցո՛ւք զնա յաւիտեան։
Քանզի եղոյց նա մեզ զիւր անսահման ողորմա-
ծութիւն։ յօժարակամ ի՛ւր ինքեան գնոյ գնեաց նա
զփրկութիւն հոգւոյ մերոյ։ Նա ո՛չ բաւական Եբ. ա։
համարեցաւ այսմ հրաշալի գործոյ զհրեշտակ
իւր երկնից, այլ զանձն իւր միայն հաւատաց
փրկագործուն մարդկան։ ինչն կամեցաւ զփրկա-
գործուին կատարել, զի գործն լինիցի պտղաւոր
և փրկութիւն լինիցի կատարեալ։ Յընթացս
երկար ջուր չարանայ իւրոյ ո՛չ վհատեցաւ նա
յանտանելի ցաւոց մարմնոյն։ և ո՛չ ստրջացաւ
՝ի բարեբարելոյ իւրոյ թշնամեաց։ այլ նա վասն
փրկութեան մերոյ զսիրտ իւր եբաց, և զանձն
բոլորանուէր մատոյց մերում փրկանաւորութեան։
Սմին իրի եկայք այժմ վերստին բացցո՛ւք
զսիրտս մեր նմա։ և յամ կեանս մեր շնորհացո՛ւք
երախտագէտ լինիլ այսպիսի Տն պատուականի։
և հանապազ՝ ի մտի պահեսցո՛ւք զյիշատակ
անհատելի շնորհայ նորա։ և ոչ այսչափ

միայն՝ այլև զխաչն մեր ՝ի վերայ ուսոյ բարձ-
Գործք. ԺԵ. ցուք և հետևեսցուք Քրիստի։ Զարշարանքն որա
ոչ միայն է փրկանք և կատարեալ քաւութիւն վասն
մեղայ մերոյ, այլ և է կատարելագոյն օրի-
նակ ամ համբերութեան և շարշարանայ։ Քանզի
եթէ պատշաճ երևեցաւ Քրիստի զայսպիսի շար-
շարանս շարշարել և մտանել յառաքաստ փա-
ռայ Հօր իւրոյ, ապա ընդէ՞ր ոչ պատշաճ իցէ
մեզ ամենեցուն տանիլ համբերութիւն զդուշնա-
քեայ վիշտս ձախորդութեան և զնեղութիւնս աշ-
Գ Պետ. Է. խարհիս այսորիկ։ Քանզի արդարև ըստ սրբոյ
առաքելոյն Պետրոսի, Քրիստոս վասն մեր մեռաւ և
մեզ եթող օրինակ՝ զի զհետ երթայցեմք հե-
Տես. Է. տոյ նորա։ Եւ եթէ մեք նմա շարշարակից
Հռովմ. Ը. լինիցիմք, հաւաստեաւ ընդ նմա յերկինս անդ
Մատ. Է. թագաւորեսցուք։ Ոչ չի շարշարանք այսր ան-
Եբր. ԺԳ. ցաւոր կենայս արժանի է փառայ հանդերձեալ
կենայն, այլ բերկրութիւն զանձինս մեր ՝ի շար-
շարանս մատուսցուք, առ ՝ի նմանող լինել Քրիս-
՝ի կեանս մեր. և այսպէս փառաւորել գործովք
մերովք զՀայրն մեր որ յերկինս է։ Եւ քանզի
որպէս դառն և դժուարին է առ ՝ի բառնալ
զխաչն Քրիստի ՝ի վիշտս և ՝ի տրտմութիւնս այսր
կենցաղոյս, այսպէս և նոյն իսկ խաչն պտղա-
բերէ զբերկրալի պտուղ յուսոյ յայնոսիկ ամե-
նայն՝ որք սիրով յանձն առնուն կրել զայն սակս
Յակ. Է. անուանն Քրիստի։ Մի այնքան գծանուրուի վշտայն
խորհեսցուք, որքան զվարձս վշտայն՝ զոր
ունիմք գտանել յերկինսն արքայութիւն։ Եւ ոչ
այս չափ միայն, այլ և յամ՝ վիշտս մեր ջնաս-
ցուք համբերել նեղութեանն սրբութիւն և անմե-
ղութիւն ըստ օրինակի փրկչին մերոյ Քրիստի։
Գ Պետ. Է. Քանզի եթէ վիշտս վշտանայցեմք վասն մերոյ
գործեալ մեղայն, համբերութեն ներգործութի-
ոչ լինի կատարեալ ՝ի սիրտս մեր. բայց եթէ

տարապարտուց գինեասա կենայ և ստայուածոյ
կրիցեմք, և՝ ի զուր զբամբասանս այլոց՝ ի վերայ
անձանց կուտիցեմք վասն սիրոյն Քրիստոսի, հաճելի
և ընդունելի լիցին վիշտք մեր առաջի Աստուծոյ.
քանզի և այսպէս տարապարտ վշտաց և բամբա-
սանաց համբերը փրկիչն մեր Քրիստոս։ Որ ոչն արար Համբերութեան
մեղս, և ոչ գտաւ նենգութիւն՝ ի բերանն նորա. Քրիստոս։
որ բամբասեալ՝ և ոչ փոխարէն բամբասէր.
չարչարեալ՝ և ոչ սպառնալիս. բայց
ի նրաւամբք մատնէր դատաւորին։

Կատարեալ համբերութիւն չունի ինչ Կատարեալ համ-
փոյթ թէ զի՞նչ վիշտս կրէ, որքան կրէ, յումմէ՞ բերութեան։
կրէ, ՝ի բարեկամաց և կամ՝ ի թշնամեաց.
այլ ջանայ կրել զամ եկեալ հասեալ վիշտն
անմեղութեամբ և տարապարտուց։ Նա առանիկ
արդարև՝ յորում կատարեալ սէր և ողորմութի
բնակի, ոչ երբէք նա կամեսցի զվրէժխնդրութի Մաս. Է.
յուսանել թշնամեաց. այլ սիրեսցէ նա զթըշ-
նամս իւր. օրհնեսցէ զանիծիչս իւր. բարի
արասցէ ատելեաց իւրոց. և աղօթս արասցէ
՝ի վերայ այնոցիկ՝ որք լլկենն և հալածեն զնա.
և այսպէս հետևող լիցի օրինակի փրկչին մե-
րոյ Քրիստի՝ որ է ամենակատար օրինակ և գայլա-
փար ամ հեզութեան և համբերութեան. քանզի
բևեռեալ գոլով նորա՝ ի խաչին՝ և սաստկագին Հեզութիւն Քրիստի։
ցաւոք արիւնաթաթաւ եղեալ յամ մատնա
օրհնեալ մարմնոյ իւրոյ, ակն յանդիմանն կայր
անարգեալ և խայտառակեալ առաջի իւրոց ո-
խերիմ թշնամեաց և խաչահանուցաց. և թէպէտ
և ալիք ցաւոց և տանջանաց զնովաւ պատէին,
և թէպէտ անհաստատ Հրէայքն զնա լրբաբար
ձաղեալ կուսահարէին, սակայն նա արտաքոյ
անհոն և անձառ ողորմութեամբ իւրոյ զայնպիսի
գթութեամբ եցոյց խաչահանուցաց իւրոց՝ ի սրտի
իւրում՝ մինչ զի աղօթեաց վասն նոցա առ Հայրն

Ղուկ. ԺԷ. 34։ երկնաւոր և ասայ. Հայր՝ թող դոցա, զի ոչ
գիտեն զինչ գործեն։ Նա աւանիկ՝ ո՞ր քան զար-
մանալի էր համբերութիւն զոր ետոյց նա՝ ի ժամ
տիրադրուժ իւրոյ մատնութեան, յորժամ մին
յիւրոյ առաքելոյ և ծառայից՝ որում զանձն
իւր էր հաւատացեալ՝ եկն յանդգնաբար մատնել
զնա՝ ի մահ՝ ի ձեռն թշնամեաց նր։ Վարդա-
պետն Քրիստոս զոչինչ բանս անարգանաց զնմանէ
ասաց. այլ հեզութեամբ եհարց զնա, ընկերս՝ վասն
Մաթ. ԺԷ. 50։ ո՞ր եկիր։ Այսպէս և սիրելի եղբարք՝ պար-
տիմք յիշել՝ ի մտի զզարմանալի օրինակս սիրոյ
և հեզութեան, զոր Քրիստոս ետոյց՝ ի չարչարանս
անձին իւրոյ՝ եթէ յիշելով մեր զչարչարանս
նորա՝ զպտուղս արդեանց՝ ի հոգիս մեր ամ-
բարիցեմք։ Զայսպիսի սէր և ողորմութիւն
պարտիմք ունել առ իրեարս. եթէ կամիցիմք
Մաթ. Է։ Ճշմարիտ ծառայ լինել Քրիստի։ Զի եթէ՝ ըստ
բանին Քրիստի՝ սիրիցեմք զայնոսիկ որք սիրեն-
զմեզ՝ զի՞նչ վարձք իցեն. ո՞չ ապաքէն և մաքսա-
տուք զնոյն գործեն։ Ի գործս սիրոյ մերոյ պար-
տիմք կատարելագոյն լինել քան զմաքսաւորսն,
որպէս և Հայրն մեր երկնաւոր կատարեալ է.
որ զարեգակն իւր ծագէ՝ ի վերայ չարայ և բա-
րեաց. և ածէ անձրև՝ ի վերայ արդարոյ և
մեղաւորաց։ Այսու օրինակաւ պարտ է մեզ և
զմեր սէրն անխտիր ցուցանել ամենեցուն. ոչ
սիրելեաց և բարեկամաց՝ նոյնպէս և օտարաց
և թշնամեաց. ըստ օրինակի հնազանդ որդւոց
երկնային հօրն մերում հնազանդաբար հետևե-
Փիլիպ. Է. 8։ լով։ Քանզի եթէ խոնարհեցոյց զանձն, լեալ
հնազանդ մահուանն՝ և մահու խաչի՝ զոր Հրէ-
այքն խայտառակ մահ համարէին, ընդէ՞ր ու-
րեմն մեք ո՛չ զանձինս մեր խոնարհեցուսցուք Աստ-
՝ ի դուզնաքեայ գործս սիրոյ և համբերութեան։
Մաթ. ԺԸ։ Թողցուք մեք իւրաքանչիւր եղբօր իւրում՝ ի

սրտից մերոց զյանցանս նոցա մանուս, որպէս
վասն սիրոյն Քո՝ի Աստուածաբանէ մեզ զյանցանս
մեր մեծամեծս։

Արդարև անպատշաճ է մեզ խնդրել
զթողութի՝ մեծամեծ մեղաց մերոց յԱՅ, և ոչ
թողուլ զդուշնաքեայ մեղս դրացեաց մերոց
յանցուցեալս ընդդէմ մեր։ Ընդունայն զողոր-
մութի՝ խնդրեմք յԱՅ, եթէ ոչ զգործս ողոր-
մութեանս յուսանիցեմք մերոց մերձաւորաց։ Քանզի
եթէ զբարկութի՝ և զյաստուծն ի վերայ քրիս-
տոնեայ եղբարց մերոց ի բաց չհանիցեմք ի
սրտից մերոց, Աստ ոչ երբեք հանցէ ի սրտէ
իւրմէ զյաստուծն և զբարկութի՝ իւր՝ որոյ մեղք
մեր զմեզ արժանի կացոյց։ Քանզի այսու դա-
շամբ Աստ եթողցեալս մեր, զի մեք թողուցուք
զմեղս այլոց։ Զէ արժան քրիստոնէից խստա-
սիրտս և անհաշտս լինել առ միմեանս, զմերձաւորս իւրեանց անարժան համարել թո-
ղուլ։ Ա՛ զի թէպէտ անարժան իցէ ընկերն
թողութե՝, սակայն Քո՝ արժանի է քոյդ ներել
կիւրաստուծոյ։ և կամի զի զընկերն վա՛ սիրոյ
ոյ արժանի համարեսցիս թողուլ։ պարտական
ես դու Քո՝ի թողուլ զմեղս քոյոց ընկերի։ Նա
աւանիկ՝ և պարտ է մեզ հնազանդ լինել Աստ, որ
մեզ զթողութի՝ առ ընկերն ունել հրամայեաց,
եթէ կամիցիք արժանանալ այնմ թողութե՝ զոր
փրկիչն մեր Քո՝ միանգամ գնեաց ի Հօրէն
Աստ հեղմամբ պատուական արեան իւրոյ։
Զոչինչ այնքան պատշաճ է ունել ծառայոյն
Քո՝ի, որքան զզթութի՝ և զողորմութի՝։ Ապա Յակ. Բ։
ուրեմն եկայք բարեհամբոյր և սիրելի լիցուք
միմեանց. աղաթեսցո՛ւք վասն իրարայ, զի ողջա-
յուսցէ զմեզ Աստ յամենակարութենէ կենաց մերոց,
և ի բաց հրաժարեցուսցէ զմեզ ի նեղելոյ և
ի վշտացուցանելոյ զմիմեանս. զի եղիցուք ի մի Եփես. Դ։

սիրտ և ՝ի մի հոգի, կենցաղելով ՝ի միասին
եղբայրական սիրով և միաբանութեամբ զօրէն սիրելի
որդւոցն ԱՅ։ Այսու գործով զԱՆ ՝ի գթա-
ծութեան շարժեսցուք ՝ի վերայ մերոյ մեղայ. և
ոչ այլ՝ միայն՝ այլ և այսու գործով դիւ-
րապատրաստ զմեզ արասցուք ընդունել զփրկիչն
և զԱրարիչն մեր յիւրում սքանչելագործութեան ի
մշանջենական միութարութեան և յառաջնութիւն
հոգւոյ մերոյ։ Ցնծութեան և ուրախութեան մեծ
է Քրիստոսի մտանել և բնակել ՝ի հոգւոջն յայնմիկ,
ուր սէր և ողորմութեան թագաւորեն, և ուր
խաղաղութեան և միաբանութեան իշխեն։ Քանզի
այսպէս ասէ սրբն Յովհաննէս. ԱՆ սէր է, և
որ կայ ՝ի սէրն՝ բնակեալ է յԱՆ, և ՝ի նմա
բնակի։ Այսուհետև գիտասցաք զսէրն՝ այ. զի նա
զանձն իւր եդ վասն մեր. և մեք վասն եղբարց
մերոց պարտիմք դնել զանձինս։ Մեք գիտեմք՝
զի փոխեցաք ՝ի մահուանէ ՝ի կեանս, քանզի
սիրեմք զեղբարս։ Իսկ որ ոչն սիրէ զեղբայրն՝
ասէ նոյն իսկ առաքեալն՝ անդէն ՝ի մահուն մնայ։
Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան
է. և գիտէք՝ զի ամենայն մարդասպան ոչ ունի
կեանս յաւիտենականս յանձին հաստատեալ։
Զեղբարս անարգուքն են ՝ի վտանգի յաւիտե-
նական մահուան. և են որդիք դատապարտուեն
և սատանայի. և որքան ՝ի մեզս իւրեանց մնա-
ցեն, անիծեալ և ատելեալ լիցին յԱՅ և յամ
երկնային զուարթնոց։ Քանզի որպէս խաղա-
ղուի և սէր առնեն զմեզ օրհնեալ որդիք ա-
մենակալին ԱՅ, այսպէս և ատելութի և նա-
խանձ առնեն զմեզ անիծեալ որդիք սատա-
նայի։ Ընկալաք մեք զշնորհս յԱՅ առ ՝ի հե-
տևիլ վարուցն Քրիստոսի խաղաղութեամբ և սիրով,
համբերութեամբ և երկայնմտութեամբ. զի արժա-
նասցուք զնա ինքն զՔրիստոս հիւրընկալել ՝ի մեզ,

՝ Յովհ. գ։
՝ Յովհ. է։
՝ Յովհ. է։
Հռովմ. է։

և այսպէս աներկմիտ լինիլ հաստատեալ շնորհօքն Քրիստոսի տենչալի փրկագործութիւնն մերում։ Եթէ զՔրիստոս և զշնորհս Քրիստոսի արժանայաք կալ ի հոգի, անտարակոյս արժանայուք Քրիստոսիս շնորհայն Այ մեծի։ Քանզի նստի նստ ընդ աջմէ Այ հօր իւրոյ երբեւ մեր փաստաբան և բարեխօս, միջնորդելով և բարեխօսելով վասն մեր յայմ պիտոյս և ի խնդրուածս մեր։ Սակայն իրի եթէ պէտս ունիցիմք երկնային շնորհայ և իմաստութեան, և խնդրուածս առաջի արկանիցեմք Այ վասն սիրոյն Քրիստոսի, անտարակոյս կատարեսցէ Աստուած զխնդրուածս մեր։ Եկայք աղէ զսիրտս մեր քննելով քննեսցուք. և տեսցուք թէ զորպիսի կարօտութեան ունիմք վասն այսր առաքինութեան սիրոյ և համբերութեան։ Եթէ տեսանիցեմք զսիրտս մեր ցուրտս և անյօժարս թողլոյ պարտապանայն մերոյ զմեղս և զյանցանս նոցա, ուրեմն զպիտոյս կարօտութեան երկնաւոր հօրն մերոյ խոստովանեսցուք և խնդրեսցուք յԱյ տալ մեզ զյօժարութիւն թողութեան։ Բայց եթէ յայտնապէս կարօտ իցեմք յօժարութեան թողութեան, և ոչ ի սիրտս մեր ցանկայցեմք ընալ զայն կարօտութիւն մեր, արդարև կարի վտանգաւոր և մահաբեր լիցի վիճակ մեր. պարտիմք յայսպիսի աղետալի վիճակի զաղաչանս մեր առ Աստուած ուղղել, և խնդրել ի նմանէ պնդութեամբ մեզայ ժանգահարեալ սիրտն մեր ի միջոյ հանել, և զնոր սիրտ երկիւղածութեան ի տեղի նորա դնել։ Քանզի եթէ զմեղս այլոցն չթողուցուք, թողութիւն ոչ գտցուք յԱյ ամենեքին։ Աղօթք և բարի գործք այլոց ոչ երբեք կարեն զԱստուած ընդ մեզ հաշտեցուցանել և խաղաղացուցանել, եթէ մեք մեզէն զհաշտութիւն և զխաղաղութիւն չունիցիմք ընդ մերոյ մերձաւորայ։ Եւ ոչ ևս ամենայն արարք և բարի գործք մեր կարեն զԱստուած շարժել յոր-

դորեալ `ի թողութիւն մեղաց մերոց, եթէ մեք զայլոց մեղսն չյանկայցեմք `ի սրտէ թողուլ։ Զողորմութիւն կամի նա և ոչ զզոհ։ Ողորմունն զիրկիչն մեր Քրիստոսի յորդորեաց շարշարեալսն թշնամեաց իւրոց. ապա ուրեմն արժան է մեզ օրինակի նորա հետևեալ և զառաքինութիւն նորա առաքինանալ։ Քանզի սակաւ օգուտ լիցի մեզ խորհիլ `ի մտի և յիշեալ զպտուղս և զարդիւնս շարշարանաց նորա, մեծայուսանալ զիարտս վշտաց նորա, բերկրիլ և հաւատալ յամ անյս փրկութիւն խաչելութեանն նորա, եթէ ջանիցիմք `ի սրտի զիսաւաք հետևելոյ պանծալի օրինակի շարշարանաց նորա։ Ամին իրի եթէ այսպէս երկիւղածութիւն և ջերմեռանդութիւն զմահ Քրիստի խորհիցիմք, և եթէ `ի յիշատակ նորին իսկ մահուան հաստատուն հաւատով յարիցիմք վասն արդեանց փրկագործութեանն նորին, և եթէ սիրով զմեզ և զամ մերսն տնօրինիցեմք յօգուտ և `ի միսիթարութիւն ընկերին՝ ոգ Քրիստոսի զանձն իւր ողջոյն մատոյց յօգուտ և `ի միսիթարութիւն մեր՝ յայնժամ կարեմք ասել թէ Հշմարտապէս զմահ Տեառն խորհիմք և զշարշարանաց Քրիստի խոկամք։ Այսպէս հետևելով մեր օրինակին Քրիստի՝ անտարակոյս հետևեսցուք զկնի նորա `ի տեղին յայն՝ ուր այժմ բազմեալ է ընդ Հօր և ընդ Հոգւոյն սրբոյ. որում փառք և պատիւ ամենայն՝ ամէն։